

**ԿԱՐԾԻՔ**

**Սոնա Կոստանտի Սիմոնյանի՝**

**«Հարադրավոր բայերը ժամանակակից հայերենում և անգլերենում**

**(գուգադրական քննություն)» թեմայով**

**Ժ.02.02 «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն»**

**մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական**

**աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Ինչպես հայերենի, այնպես էլ անգլերենի լեզվական համակարգում լեզվաբանները մշտապես կարևորել են գուգադրական ուսումնասիրությունների դերն ու նշանակությունը, որը ոչ միայն հնարավորություն է տալիս ուսումնասիրողին ներթափանցելու լեզվի խորքային կառույցների մեջ, այլև լայն ասպարեզ բացում՝ գուգադրելու երկու լեզուների նմանություններն ու տարբերությունները, վեր հանելու քննվող հարցի շուրջ ընտրված լեզուների /մերձավոր կամ ոչ/ առավելություններն ու թերությունները: Հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի ուսումնասիրությունների հիմնական դիտարկումները, դրանց տարբերությունները և նմանությունները ձևավորվել և քննարկվել են ինչպես հայ, այնպես էլ ռուս, արևմտյան լեզվաբանների աշխատություններում: Հարադրավոր բայերը թե՛ ժամանակակից հայերենի, թե՛ անգլերենի դինամիկ ու ակտիվ քերականական երևույթներից են, որոնց օգնությամբ ձևավորվում է գրավոր և բանավոր խոսքը:

Մեր կարծիքով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ՝ հարադրավոր բայերը երկու լեզուների կենդանի ու

փոփոխվող կառուցվածքային համակարգի առանցքային բաղադրիչներ են, որոնց կիրառումը ընդլայնվում է ինչպես զանգվածային մեղիայի, հաղորդակցման թվային հարթակների, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ: Երկրորդ՝ դրանց իմաստաբանական բազմաշերտությունը, արտահայտչական հագեցվածությունը և թարգմանական բարդությունները դեռևս մնում են հետազոտողների հետաքրքրության շրջանակում: Այս առումով թեմայի ուսումնասիրությունը ոչ միայն տեսական արժեք ունի, այլ նաև գործնական կարևորություն՝ թարգմանաբանության, ուսումնական մեթոդաբանության, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցության գործընթացը ապահովելու համար:

Սոնա Սիմոնյանի հետազոտությունը նվիրված է հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի գուգադրական քննությանը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում է աշխատանքի նորույթը նպատակը, արդիականությունը, մեթոդների ընտրությունը:

Առաջին գլուխը քննում է ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի՝ տարբեր լեզվաբանների կողմից դիտարկված բնորոշումները և կառուցվածքային կաղապարները: Ատենախոսը հարադրությունն արդյունավետ լեզվական միջոց է համարում երկու լեզուներում՝ համադրելով նրանց իմաստները և նրբերանգները: Տվյալ հատվածի ենթագլուխները ըստ ամենայնի քննում են հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը, ինչպես նաև ոչ բայական բաղադրիչի բառակազմական կաղապարները:

Երկրորդ գլուխը անդրադառնում է երկբաղադրիչ բայական դարձվածքներին (ԵԲԴ) և հարադրավոր բայերին, դիտարկվում է, որ դարձվածքը երկու կամ ավելի բառերից կազմված կայուն բառակապակցություն է, որի բաղադրիչները կորցնում են իրենց բառային իմաստները և միասին արտահայտում են նոր, պատկերավոր իմաստ: Կառուցվածքային առումով, ըստ ատենախոսի դիտարկումների, ԵԲԴ-ները հաճախ

առաջացել են ազատ բառակապակցություններից, որոնք վերախմաստավորվելով՝ ստանում են նոր, կայուն իմաստ: Ազատ բառակապակցությունները իրավիճակային են և փոփոխվող, մինչդեռ դարձվածքները ունեն պատկերավորություն, կայունություն և վերարտադրելի բնույթ: Երկրորդ գլխի ենթազույգները քննում են ԵԲԴ-ների տեսակները ըստ ոչ բայական բաղադրիչի իմաստի, նրանց բառային-բայական առանձնահատկությունները, դասակարգումը ըստ բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի, ինչպես նաև՝ ձևաբանական առանձնահատկությունները: Երրորդ գլուխը քննում է նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը: Անզլերենում դրանք կարող են ունենալ ինչպես բառային, այնպես էլ դարձվածային իմաստ, իսկ հայերենում հիմնականում ընկալվում են որպես հարադրավոր բայեր՝ պայմանավորված լեզվի ձևաբանական համակարգով: Ենթազույգները քննում են նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի գործածության ոլորտը, հարադրավոր բայերի ուսուցումը, դրանց գուգադրումը:

Եզրակացությունները ամփոփում են ստացված արդյունքները: Օգտագործված գրականությունը պարունակում է տեսական և գործնական աղբյուրները, որոնք օգտագործվել են աշխատանքի մեջ:

Աշխատանքը իր ձևաչափի մեջ արժեքավոր ենք համարում՝ հիմք ընդունելով այն համգամանքը, որ քննվող նյութը թե՛ տեսական թե՛ գործնական առումով երկու լեզուների բանավոր և գրավոր խոսքի կիրառման հարցում կարևոր նյութ է պարունակում:

Աշխատանքը շահեկան դիրքերից է ներկայանում հաշվի առնելով թեմայի ընտրությունն ու արդիականությունը: Հարկ է նշել նաև, որ հայերեն-անգլերեն հարադրավոր բայերի գուգադրական քննությունը համեմատաբար սակավ է ուսումնասիրվել լեզվաբանության ոլորտի հետազոտողների կողմից և այս առումով աշխատանքը ներկայանում է շահեկան դիրքերից:

Գովելի է նաև այն հանգամանքը, որ աշխատանքը միաժամանակ կարելի է դիտարկել թե՛ տեսական լեզվաբանության և թե՛ կիրառական լեզվաուսուցման շրջանակներում:

Տեսական հիմքի և գրականության կիրառման առումով գովելի է նաև, որ հայ լեզվաբանական դպրոցը ներկայացված է հիմնարար և հենքային հեղինակների աշխատություններով (Մ. Աբեղյան, Ա. Մարգարյան, Ս. Էլոյան, Է. Աղայան): Կցանկանայինք նշել նաև, որ անգլերենի լեզվաբանական դպրոցի առումով կիրառվել են հեղինակավոր ուսումնասիրություններ (Bolinger, Lipka, Olson, Sweet), ինչպես նաև մասնագիտական բառարաններ:

Աշխատանքի կառուցվածքը հստակ է և տրամաբանական՝ պահպանելով հաջորդականության սկզբունքը՝ կառուցվածք → դասակարգում → իմաստաբանություն → գործածություն → զուգադրական վերլուծություն:

Հարկ էնք համարում նշել նաև, որ ԵԲԴ-ների կիրառումը կատարված է տեսականորեն հիմնավորված ձևով, իսկ աղյուսակներն ու գծապատկերները ծառայում են աշխատանքի վերլուծական մասի առավել խորը և պատկերավոր ընկալմանը:

Ուսումնասիրությունը հիմնված է մեծածավալ բառարանային և փաստական նյութի վրա, որտեղ քանակական տվյալները ծառայում են եզրահանգումների ձևավորմանը, իսկ եզրահանգումները, իրենց հերթին, պարունակելով գործնական աշխատանքի ամփոփ նկարագիրը՝ ունեն գիտական և կիրառական արժեք:

Ատենախոսը, գործի դնելով իր հենքային կարողությունն ու հմտությունը, ինչպես նաև հետևողական հետաքրքրասիրությունը, հետազոտվող նյութը ներկայացնում է հստակ ու համապարփակ ձևով, կատարում հիմնավորված վերլուծություններ և եզրահանգումներ: Ուսումնասիրվել է թեմային առնչվող տեսական մեծածավալ

գրականություն: Ատենախոսությունը իր ձևի և բովանդակության տեսակետից, հատկանշական է թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային առումներով:

Այնուամենայնիվ, աշխատանքի վերաբերյալ կցանկանայինք նշել որոշ նկատառումներ:

- ❖ Ներածության մեջ, աշխատանքի տեսական և գործնական նշանակության հիմնավորումը փոքր -ինչ ընդհանրական է ներկայացված:
- ❖ Ատենախոսը էջ 12 նշում է, որ Դոնգենը այն կարծիքին է, որ հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչը մակբայ է, և որ գործողությանը կատարված կերպ հաղորդելու համար բայը հաճախ մակբայ է պահանջում, ինչպես՝ *cut* «կտրել», *cut down* «կտրել մինչև վերջ»: Կցանկանայինք նշել, որ նշված թարգմանությունը, վերաբերում է ծառի, թփի, խոտի կտրելու գործընթացին: Նշված հարադրավոր բայը ունի նաև կրճատել, կտրուկ նվազեցնել /*cut down expenses* – կրճատել ծախսերը, *cut down sugar, bread* – շաքարի, հացի օգտագործումը նվազեցնելու իմաստ:
- ❖ Նկարագրության և վերլուծության հարաբերակցության առումով որոշ հատվածներում նկարագրական մոտեցումը գերակշռում է վերլուծականին:
- ❖ Էջ 62, 106-ի օրինակների վերլուծությունը ավելի հանգամանակից է կատարված, քան տվյալ հատվածի եզրահանգումները, որոնք ներկայացված են ավելի ընդհանրական կերպով:

Վերը նշվածն ամենևին էլ չի նսեմացնում սույն աշխատանքի իմաստային և կառուցվածքային արժեքն ու նշանակությունը: Ատենախոսությունը ամբողջովին բավարարում է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ուստի ատենախոս Սոնա Կոստանտի Միմոնյանը արժանի է ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական

լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանին:

Ռոմանազերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի  
վարիչի ժամանակավոր պաշտոնակատար

բ.գ.թ., դոցենտ՝



Մանանա Դալայան

Մանանա Դալայանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՊՄՀ գիտական քարտուղար

մ.գ.թ., դոցենտ



Հակոբ Թադևոսյան  
17.03.2026թ.

10.03.2026.թ.